**Հաստատված է**

**30.01.2025 թ. գիտխորհրդի նիստում**

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի

## 2025-2030 թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

**Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի (այսուհետ՝ բուհ)** զարգացման ռազմավարության իրականացման ժամանակացույցը հիմնվում է ՀՀ օրենսդրության, բուհի 2025-2030 թթ զարգացման ռազմավարական ծրագրի վրա և միտված է բուհի առաքելությանը՝ հոգեբանության և սոցիալական աշխատանքի ոլորտներում պատրաստել աշխատաշուկայի կարիքներին և արդի գիտական նվաճումներին համահունչ որակյալ մասնագետներ՝ նպաստելով մարդու հոգեկան առողջության պահպանմանն ու զարգացմանը:

**ՆՊԱՏԱԿ 1: ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

**ՆՊԱՏԱԿ 2: ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

**ՆՊԱՏԱԿ 3: ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ՆՊԱՏԱԿ 4: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**ՆՊԱՏԱԿ 5: ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՆՊԱՏԱԿ 1: ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԴՅՈՒՆՔ՝ Որակյալ կրթության իրականացման ապահովում, փոխակերպվող հասարակության հոգեբանական հավասարակշռության ու հոգեկան առողջության խնդիրների լուծմանը համապատասխանող, նորարական գիտական մտածողությամբ օժտված որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստում**

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|
| 1. Կրթության որակի բարձրացում և կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում | Վերանայել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման, կազմակերպման և իրականացման փաստաթղթերը | ՌԱ պատասխանատու<br>Պրոռեկտորներ | 2028 մայիս | Վերանայված և հաստատված բալավրի 1 և մագիստրոսի 1 ՄԿԾ-ներ |
| | իրականացնել հետազոտություններ և ապահովել առարկայական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի և գործատուների առանձնահատուկ պահանջներին | Պրոռեկտորներ<br>Ամբիոնի վարիչ<br>ՌԻԽ | 2025-2030 | Ամենամյա ուսումնասիրությունների առկայություն՝ աշխատաշուկայի պահանջների, շրջանավարտների ունեցած դերի մասին |
| | Կատարել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մշտադիտարկում և գնահատման արդյունքների հիման վրա | Ուսումնական հարցերով պրոռեկտոր | 2028 մայիս | Մշտադիտարկված բալավրի 2 և մագիստրոսի 1 ՄԿԾ-ներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արդիականացնել դրանց բովանդակությունը, կառուցվածքը և կրեդիտների հաշվարկման մեխանիզմները | Ամբիոնի վարիչ | | |
| 2. ՄԿԾ-ներում՝ սովորողների գնահատման ու նորարարական կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացների ներդնում | Միջազգային բուհերի հետ առարկայացանկերի բենչմարքինգի վերլուծության արդյունքներով անհրաժեշտ առարկաների ներդնում | Ուսումնական հարցերով պրոռեկտոր<br><br>Ամբիոնի վարիչ | 2026 հունիս<br><br>Անհրաժեշտության դեպքում՝ պարբերաբար | Նոր առարկաների դասավանդման փաթեթների առկայություն:<br><br>Դասընթացների դասավանդում |
| 3. Դպրոց-բուհ, դիմորդ-բուհ կապերի ապահովում | Մշակել և հրապարակել ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար | Պրոռեկտորներ<br><br>ՌԱ պատասխանատու<br><br>Հանրային կապերի և գովազդի պատասխանատու | ամենամյա | Ուսանողների և դիմորդների համար մշակված ուղեցույցներ |
| | Անցկացնել մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ դպրոցի 12-րդ դասարանցիների և քոլեջի ավարտական կուրսի ուսանողների հետ | Պրոռեկտորներ<br><br>Ամբիոնի վարիչ<br><br>Հանրային կապերի և գովազդի բաժին | ամենամյա | Քոլեջներից և դպրոցներից դիմորդների ամենամյա 5% աճ |
| 4. Դասավանդման, ուսումնառության | Զարգացնել հեռավար կրթության կազմակերպման | Պրոռեկտորներ | ամենամյա | Հեռակա ուսուցմամբ ուսանողների ակտիվության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գործընթացների բարելավում | և իրականացման ձևերը, բարելավել էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա ուսումնամեթոդական նյութերը և համալրել նոր նյութերով | Ամբիոնի վարիչ | | ապահովում |
| | Ապահովել յուրաքանչյուր դասախոսի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների առկայությունն ամբիոնում՝ ուսումնառողների կողմից դրանց ազատ օգտագործման հնարավորությամբ | Պրոռեկտորներ<br><br>Ամբիոնի վարիչ | ամենամյա | Ամբիոններում առարկայական փաթեթների էլեկտրոնային տարբերակների առկայություն<br><br>Հաճախակի բացակայող՝ աշխատանքի բերումով՝ ուսանողներին հեռավար ակտիվ ներգրավում դասապրոցեսներին: |
| | Ուսումնառողների և դասավանդողների կարիքների պարբերական ուսումնասիրությունների իրականացում | ՈԱ պատասխանատու | ամենամյա | Հարցումների և վերլուծությունների առկայություն |
| | Իրականացնել յուրաքանչյուր կիսամյակի ուսանողների առաջընթացի գնահատում | Ուսումնական հարցերով պրոռեկտոր | Պարբերական | Ուսանողների կիսամյակային առաջընթացի հաշվետվության առկայություն |
| | Անապահով և սոցիալական աջակցության կարիք ունեցող գերազանց սովորող | Ռեկտոր<br><br>Պրոռեկտորներ | ամենամյա | Ամենամյա ուսումնական վարձավճարի զեղչեր 5% ուսանողների համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուսանողների խրախուսում | ՌԻԽ | | |
| | Կազմակերպել պրակտիկայի արդյունքների քննարկման հանդիպումներ | Ամբիոնի վարիչ<br>Ծրջանավարտների և պրակտիկայի պատասխանատու | ամենամյա | Կազմակերպված տարեկան 1 քննարկում |
| 5. Էլեկտրոնային գրադարանի շարունակական բարելավում | Թվայնացնել գրադարանում ավելացվող գրքերը՝ էլեկտրոնային կատալոգի տեսքով | Գրադարանի և արխիվի պատասխանատու | ամենամյա | Թվայնացված կատալոգի ընդլայնում |
| | Ներդնել գրադարանի ակտիվ շահառուներին խրախուսելու մեխանիզմ | Գրադարանի և արխիվի պատասխանատու<br>ՌԱ պատասխանատու | 2026-2030 | «Գրադարանի լավագույն բարեկամը» խրախուսման ներդնում |
| 6. Ոչ ֆորմալ և շարունակական կրթության համակարգի կատարելագործում | Կազմակերպել կրթական լրացուցիչ ծրագրեր և դասընթացներ, մասնագիտական տարատեսակ վերապատրաստումներ | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Ամբիոնի վարիչ | ամենամյա | Կազմակերպված տարեկան 5 դասընթացներ և թրեյնինգներ<br>Վերապատրաստված անձանց առկայություն՝ ուսանողներ, տնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ, դաստիարակներ |
| | Կարճաժամկետ (մինչև 6 ամսյա) ուսուցողական հատուկ մասնագիտական ուղղվածության ծրագրերի մշակում և ներդրում ոչ ավանդական ուսանողների | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Ամբիոնի վարիչ | ամենամյա | Ներդրված ծրագիր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համար՝ բանակի սպաներ, դպրոցի ուսուցիչներ, դպրոցի, քոլեջների տնօրեններ, սպասարկման տարբեր ոլորտների աշխատողներ | | | |
| 7. Սովորողների և շրջանավարտների ակտիվ կապի ապահովում | Կազմակերպել ուսումնական և աշխատաշուկայի պահանջների, նորարարությունների քննարկումներ | Պրոռեկտորներ<br><br>Ամբիոնի վարիչ<br><br>Շրջանավարտների և պրակտիկայի պատասխանատու<br><br>ՈԱ պատասխանատու | Ամենամյա | Կազմակերպված տարեկան 2 քննարկումներ |

**ՆՊԱՏԱԿ 2: ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

***ԱՐԴՅՈՒՆՔ՝ Հետազոտական և ստեղծագործական գործունեության կրթական գործընթացում ներդնելու գործընթացի խթանում, ՀՀ և արտերկրի առաջավոր գիտական կենտրոնների հետ համագործակցային-գործընկերային կապերի զարգացում***

| *ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ* | ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ |
|---|---|---|---|---|
| 1. Հաշվի առնելով ոլորտի մարտահրավերներն ու միտումները՝ երկրի կարիքներին և զարգացման ծրագրերին համահունչ գիտական հետազոտությունների ընդլայնում | Վերանայել հետազոտական և խորհրդատվական աշխատանքների զարգացման առաջնային ուղղությունները՝ դրանք համապատասխանեցնելով հոգեբանության և սոցիոլոգիայի արդիականացման և նորարարական | Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Ամբիոնի վարիչ | 2028 մայիս | Հաստատված հետազոտական և խորհրդատվական հոգեբանական ու սոցիոլոգիական աշխատանքների թեմաներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հեռանկարներին | | | |
| | Գիտական, հետազոտական աշխատանքներում ուսանողերին ներգրավելու մեխանիզմների կիրառում | Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Ամբիոնի վարիչ | Ամենամյա | Գիտական պարբերականներում տպագրված դասախոս-ուսանող , ուսանողի գիտական հոդվածների թվի աճ` 35% |
| 2. Բուհի հետազոտական աշխատանքների արդյունքների ու ազդեցությունների վերաբերյալ հանրության ու գիտական աշխարհի իրազեկման աշխատանքների իրականացման բարելավում | Ասպիրանտական հետազոտական աշխատանքներն ուղարկել համապատասխան ֆակուլտետներ ունեցող այլ բուհերի գրադարաններին, ամբիոններին | Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Ամբիոնի վարիչ | Ամենամյա | Ասպիրանտական տպագրված հետազոտությունների թվաքանակի ամենամյա աճ:<br><br>Այլ բուհերում այդ աշխատանքների առկայություն |
| | «Տարվա հետազոտություն» անվանակարգով սահմանել ամենամյա մրցանակ | Ռեկտոր<br><br>Գիտական հարցերով պրոռեկտոր | Ամենամյա | «Տարվա հետազոտություն» մրցանակակրի առկայություն |
| | Խրախուսել միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում ՊԴ կազմի անդամների հրապարակումները և օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին նրանց մասնակցությանը | Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Արտաքին կապերի պատասխանատու<br><br>Ամբիոնի վարիչ | Ամենամյա | Միջազգային գրախոսվող գիտական հանդեսներում ՊԴ կազմի 35 % անդամների հրապարակումներ<br><br>արտասահմանյան գիտաժողովներին մասնակից ՊԴ անդամներ՝ 20% յուրաքանչյուր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ամբիոնից |
| | Կազմակերպել ներբուհական, համապետական, միջազգային գիտաժողովներ և գիտական սեմինարներ | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Ամբիոնի վարիչ<br>Արտաքին կապերի պատասխանատու | Ամենամյա | Կազմակերպված տարեկան ներբուհական՝ 2, համապետական՝ 1, միջազգային ՝1 ամենամյա գիտաժողովներ<br>գիտական սեմինարների թվի աճ |
| | Խրախուսել հետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքի ձևավորումը և դրանց ուսուցման գործընթացում կիրառումը | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Ամբիոնի վարիչ | Ամենամյա | Բուհի ՊԴ և ուսանողական կազմի հետազոտական աշխատանքների թվաքանակի ամենամյա աճ<br>դասավանդվող առարկաների գրականության ցանկում ներառված համալսարանական հետազոտությունների՝ 50% |
| | Կապեր հաստատել տեղական և միջազգային գրադարանների հետ | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Գրադարանի և արխիվի | Ամենամյա | Գրադարանների հետ առկա գործուն 2 հուշագրեր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պատասխանատու | | |
| **ՆՊԱՏԱԿ 3: *ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*** <br><br> ***ԱՐԴՅՈՒՆՔ՝ Կատարելագործել բուհի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և որակի մշտադիտարկումը*** | | | | |
| ***ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ*** | **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ** | **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ** |
| 1. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ինքնավարության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում: | Ներքին իրավական ակտերի արդիականացում | Ռեկտոր <br><br> ՈԱ պատասխանատու | Ամենամյա | Կառավարման բոլոր օղակներում, բուհի բոլոր ստորաբաժանումներում որակի ապահովման պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում (ՊԻՍԲ) շրջափուլով առաջնորդվելու մեխանիզմի ներդրում |
| | Ամենամյա SWOT վերլուծության արդյունքների հավաքագրում և բուհի կառավարման արդյունավետության և որակի քննարկում | Ռեկտոր <br><br> Պրոռեկտորներ <br><br> ՈԱ պատասխանատու | 2025-2030 <br><br> Մայիս-հունիս | SWOT վերլուծության առկայություն՝ բացահայտված խնդիրների հաղթահարմանն ուղղված առաջարկություններ՝ միտված միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններում դրանց ներառմանը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Կազմակերպել աշխատաժողովներ՝ նվիրված կրթության որակի ապահովման և բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնահարցերին | Ռեկտոր<br>Պրոռեկտորներ<br>ՈԱ պատասխանատու | 2025-2030 | Բուհի ՊԴ, ուսանողական և վարչական անձնակազմի ներգրավում՝ որպես որակի ապահովման աջակիցների |
| 2. Բուհի վարչական, ՊԴ կազմի կարողությունների, հմտությունների մակարդակի բարձրացման ապահովում | Ապահովել դասախոսների գիտական աստիճանի բարձրացմանն անհրաժեշտ պայմաններ | Ռեկտոր<br>Պրոռեկտորներ<br>Ամբիոնի վարիչ | 2025-2030 | Գիտական աստիճանների բարձրացմամբ ՊԴ կազմի թվի աճ 25 % |
| | Ներդնել կրթագիտական ակտիվության խրախուսման մեխանիզմ | Ռեկտոր<br>Ռեկտորի խորհրդական<br>Ամբիոնի վարիչ | 2025-2027 | Հաստատված խրախուսման կարգ<br>Տարեկան խրախուսումներ՝ յուրաքանչյուր ամբիոնից առնվազն մեկ դասախոս |
| 3. Անձնակազմի բարձր որակավորում ունեցող կադրերով համալրման շարունակականության ապահովում | Ապահովել ասպիրանտուրան ավարտած մեր ուսանողներին աշխատանքով՝ որպես գիտ. աշխատող և դասավանդող անձնակազմ | Ռեկտոր<br>Պրոռեկտորներ | 2025-2030 | ՊԴ կազմի 40% երիտասարդացում և 20% բուհի շրջանավարտների ընդգրկում ՊԴ կազմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ուսումնական գործընթացում ներգրավել առաջատար տեղական և արտերկրյա համալսարանների դասախոսներ | Ռեկտոր<br><br>Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Տեղական և արտերկրյա համալսարաններից և աշխատաշուկայից ներգրավված դասախոսների թվի աճ՝ 15% |
| 4. Ապահովել ուսուցողական հետազոտական նյութերի և գործիքների քանակի ու արդյունավետության բարձրացումը | Ժամանակակից մասնագիտական գրականությամբ համալրել բուհի գրադարանը (հայերեն և օտար լեզուներով) | Ռեկտոր<br><br>Գրադարանի և արխիվի պատասխանատու | 2025-2030 | Համալրված գրականության ցանկ |
| | Հոգեբանական-խորհրդատվական կենտրոնը համալրել հոգեախտորոշիչ սարքավորումներով | Ռեկտոր | 2025-2030 | Սարքավորումների առկայություն և դրանցով իրականացված տվյալների առկայություն համալսարանի գիտահետազոտությունների մեջ |
| 5. Բուհի ֆինանսական հոսքերի աղբյուրների բազմազանեցում | Հիմնել և շնորհել նոր անվանական կրթաթոշակներ | Ռեկտոր<br><br>Պրոռեկտորներ | 2025-2030 | Անվանական կրթաթոշակի առկայություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ակտիվացնել բուհի մասնակցությունը հանրային ծառայությունների ոլորտում հայտարարվող դրամաշնորհային ծրագրերին | Ռեկտոր<br>Պրոռեկտորներ<br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Դրամաշնորհային ծրագրի առկայություն |
| **ՆՊԱՏԱԿ 4: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**<br>**ԱՐԴՅՈՒՆՔ՝ Բարձրագույն կրթության միջազգային տարածքների ինտեգրման գործընթացներին բուհի շարունակական ակտիվ մասնակցություն, միջազգային մասնագետների ներուժի ներգրավում կրթական ծրագրերում, օտարերկրացի և սփյուռքահայ սովորողների թվաքանակի աճ:** | | | | |
| ***ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ*** | **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ** | **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ** |
| 1. Միջազգային ակադեմիական և ոչ ակադեմիական կառույցներին անդամակցության/ համագործակցության ընդլայնում | Արդիականացնել բուհի միջազգայնացման քաղաքականությունը և ընթացակարգերը | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Արտաքին կապերի պատասխանատու<br>ՈԱ պատասխանատու | 2025-2030 | Հաստատված միջազգայնացման քաղաքականություն |
| | Մասնակցել միջազգային գիտակրթական ծրագրերին և միջոցառումներին | Ռեկտոր<br>Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Գիտակրթական ծրագրերին և միջոցառումներին բուհից մասնակցություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Կնքել համագործակցության նոր պայմանագրեր օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ՝ բուհի գերակա ուղղություններով | Ռեկտոր<br><br>Գիտական հարցերով պրոռեկտոր<br><br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Նոր 2 պայմանագրերի առկայություն<br><br>Համագործակցային աշխատանքների ակտիվություն |
| 2. Օտարերկրյա ուսանողների ներգրավվածության ընդլայնում և գրավիչ գիտակրթական միջավայրի ապահովում | Խթանել օտարերկրացի, ինչպես նաև սփյուռքահայ սովորողների ներհոսքը | Ռեկտոր<br><br>Գիտական հարցերով պրոռեկտոր | 2025-2030 | Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների թվաքանակի աճ |
| | Օտարերկրացի ուսանողների համար մշակել և ներդնել օտար լեզվով դասընթացներ և/կամ մոդուլներ | Ռեկտոր<br><br>Պրոռեկտորներ<br><br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Օտար լեզվով դասավանդվող դասընթացների առկայություն |
| | Միջազգային փորձառու մասնագետների ներգրավել կրթական և գիտական գործընթացներում | Ռեկտոր<br><br>Պրոռեկտորներ<br><br>Արտաքին կապերի պատասխանատու | 2025-2030 | Դասավանդման, ՄԿԾ-ների վերանայման աշխատանքներում միջազգային մասնագետներ ներգրավված կազմի թվաքանակի աճ 15 % չափով |
| **ՆՊԱՏԱԿ 5: ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**<br><br>**ԱՐԴՅՈՒՆՔ՝** Բուհի ճանաչելիության բարձր մակարդակի, հասարակության ներգրավվածության բարելավում: | | | | |
| ***ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ*** | **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ** | **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՄԱՆ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | **ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ** | |
| 1. Սովորողների և ՊԴ կազմի հասարակական ակտիվության խրախուսում | Ապահովել հասարակական գործընթացներում բուհի ներկայացվածությունը՝ ուսանողների կամ ՊԴ կազմի միջոցով | Հանրային կապերի և գովազդի պատասխանատու<br>Ամբիոնի վարիչ<br>ՈՒԽ | 2025-2030 | Ամենամյա խրախուսված ուսանողներ և դասախոսներ |
| 2. Արտաքին շահակիցների հետ կապի ամրապնդման մեխանիզմների զարգացում | իրականացնել ներբուհական ծրագրեր հանրապետության ուսումնական հաստատությունների սովորողների և շրջանավարտների համար՝ ծանոթացնելով նրանց ամբիոնների աշխատանքին, առաջարկվող մասնագիտություններին | Պրոռեկտորներ<br>Ամբիոններ<br>Հանրային կապերի և գովազդի պատասխանատու | 2025-2030 | Իրականացված ամենամյա 1 հանդիպում |
| | Կազմակերպել աշխատաժողովներ՝ գործատուների, բուհի շրջանավարտների մասնակցությամբ | Գիտական հարցերով պրոռեկտոր<br>Ամբիոնի վարիչ<br>Շրջանավարտների և պրակտիկայի պատասխանատու | 2025-2030 | Կազմակերպված տարեկան թվով 2 աշխատաժողով, քննարկումներ |
| 3. Բուհի վարկանիշի ու ճանաչելիության շարունակական բարձրացման | Հասարակությանը մասնագիտական, կրթական և խորհրդատվական | Հանրային կապերի և գովազդի պատասխանատու | 2025-2030 | Ուսումնական այլ հաստատություններ և փոխադարձ այցերի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ապահովում | ծառայությունների մատուցում | Ամբիոնի վարիչ | | թվաքանակի աճ |
| | Կնքել համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Երևանի և ՀՀ մարզերի ավագ ու հիմնական դպրոցների, ինչպես նաև թիրախավորված ուսումնական այլ հաստատությունների հետ | Ծրջանավարտների և պրակտիկայի պատասխանատու<br>Ամբիոնի վարիչ | 2025-2030 | Պրակտիկաների անցկացման վայրերի թվաքանակի աճ |
| | Համալսարանի պաշտոնական կայքի անընդհատ թարմացում և սոցիալական մեդիայի հնարավորությունների լայն օգտագործում: | Հանրային կապերի և գովազդի պատասխանատու<br>Ամբիոնի վարիչ<br>ՈՒԽ | 2025-2030 | Համացանցային նյութերի քանակի, դիտումների 20 % աճ |

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՈԱԾ - Որակավորումների ազգային շրջանակ

ՈԱ- Որակի ապահովում

ՄԿԾ-Մասնագիտական կրթական ծրագիր

ՁԼՄ-Զանգվածային լրատվության միջոցներ

ՊԴ-Պրոֆեսորադասախոսական

ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ